

ԳՐԱԽՈՍԱԿԱՆ

ԲՈՒՅՍԵՐԻ ՄՈՐՓՈԼՈԳԻԱՆ ԵՎ ԷԿՈԼՈԳԻԱՆ

Թարգմանություն проф. Л. И. Курсанов-ի և проф. М. И. Голенкин-ի խմբագրությամբ Մանկավարժական ԲՈՒՀ-երի համար կազմած «Курс ботаники» ձեռնարկի քրկրորդ և չորրորդ մասերի: Պետհրատ, Երևան, 1936 թ.:

Թեև այս գրքի հրապարակումից անցել է ավելի քան չորս տարի, այնուամենայնիվ արժե մի քանի խոսք ասել նրա մասին, որովհետև հազիվ թե մի այլ թարգմանություն հագեցած լինի այնպիսի և այնքան սխալներով, որ կարողանա ավելի լավ օրինակ դառնալ, թե ինչպես չպետք է թարգմանել:

Ամենից առաջ ասենք, որ հայերեն լեզվով բիոլոգիական գրականությունը շատ աղքատ է: Բացակայում են անգամ կարևորագույն ձեռնարկները ԲՈՒՀ-երի և միջնակարգ դպրոցների համար. էլ չենք ասում օժանդակ և լայն գրականության մասին, որը ներկայացված է հատուկեմտ գրքերով, իսկ պահանջը մեծ է: Ահա թե ինչու բիոլոգիայի այս կամ այն բնագավառին վերաբերող ամեն մի գիրք ընդունվում է գրկաբաց և յուրաքանչյուր քայլ, որ արվում է այս ուղղությամբ, ողջունելի է: Ողջունելի է նաև ՀՍՍՌ Պետհամալսարանի նախաձեռնությունը թարգմանաբար հրապարակելու Մոսկվայի Պետհամալսարանի հայտնի պրոֆեսորների կազմած բուսական ձեռնարկի որոշ գլուխները: Պետք է ասել, որ այս ձեռնարկը կազմված է Մանկավարժական ԲՈՒՀ-երի համար և միայն մասամբ կարող է բավարարել մյուս ԲՈՒՀ-երի պահանջները:

Այս ձեռնարկն ունի իր առավելությունները, բայց և իր պակասությունները, որոնցից ամենամեծն այն է, որ չի մորֆոլոգիայի և չի էլ էկոլոգիայի մասում նյութն էվոլյուցիոն ուսմունքի տեսանկյունով չի շարադրված և շատ բաներում հին՝ «կլասիկ» դասագրքերի կրկնություն է:

Սակայն մենք ցանկանում ենք այստեղ կանգ առնել գլխավորապես թարգմանության վրա:

Նախ՝ յուրաքանչյուր թարգմանությունից պահանջվում է, որ նա ճիշտ և հարազատ տա բնագիրը: Դա մանավանդ վերաբերում է գիտական գրականությանը: Այստեղ պետք է ասել՝ գիրքը տուժում է նրանից, որ շատ տեղերում խախտված է թարգմանության այդ հիմնական պահանջը: Օրինակ՝ «Փոշանոթի ձևը թեպետ բազմազան, բայց ժառանգականորեն կայուն է յուրաքանչյուր բուսական տեսակի համար» (էջ 152): Անկախ նրանից, որ այս

նախադասության մեջ հիմնական միաբեր պարզ չէ և «բայց»-ն էլ տեղում չէ, որովհետև բազմազանությունը չի ժխտում կայունությունը և բոլորովին կարիք չկա այդ երկու հասկացողությունները հաշտեցնել, այն պարզապես սխալ է: Բնագրում ունենք. «Форма пыльника довольно разнообразна и наследственно постоянна для каждого вида растений», որը թարգմանաբար կլինի՝ «Փոշանոթի ձևը բավական բազմազան է և յուրաքանչյուր բուսական տեսակի համար ժառանգորեն կայուն»: ... «сосочки», թարգմանված է «ծծաններ» (էջ 151), «усик» — «փուշ» (էջ 84), «венерина мухоловка» — «Վեներին ճանճորս» (էջ 87), «оборот» — «շրջան» (էջ 146), «многобрачный» — «բազմաբեղուն» (էջ 154), «красный клевер» — «կարմիր առվույտ» (էջ 188) և այլն:

Գիտական գրականության մեջ առաջնակարգ տեղ են բռնում տերմինները: Վերջիններիս հաջող և անհաջող լինելուց է մեծ չափով կախված նաև նյութի դուրըմբունքիությունը: Ճիշտ է, մինչև այժմ մենք բուսաբանական հայերեն մշակված տերմիններ չունենք և միայն վերջերս կազմակերպված Ռեսպուբլիկական Տերմինաբանական կոմիտեի շնորհիվ տերմինների հարցն սկսում է կարգավորվել, սակայն ներելի չէ թույլ տալ մի այնպիսի շփոթ, որ կա այս գրքում: Օրինակ, սեռ բառը գործ է ածվում ցեղի (genus) իմաստով, նաև արական կամ իգական սեռի իմաստով, և, վերջապես, միատարրի կամ բազմատարրի հասկացողություններ արտահայտելու համար:

Մի շարք տերմիններ բերվում են թարգմանաբար և չեն գործածվում մի շարք արդեն ընդունված տերմիններ: Օրինակ՝ «черенок»-ը թարգմանված է «մատ» (էջ 102), պետք է լինի «կտրոն» «орган» — թարգմանված է «գործարան» մինչդեռ պետք է գործածել հենց «օրգան» բառը, «корневые волоски» — թարգմանված է «մազարմատներ» (էջ 43), պետք է լինի արմատամազեր. դրանք խիստ տարբեր հասկացողություններ են, և այլն:

Ավելի ևս շփոթված են բույսերի անունները: Շատ հանրածանոթ բույսերի հայերեն անունները բոլորովին չեն բերվում և գործ են ածվում լատիներեն կամ ռուսերեն անունները. օրինակ՝ գրվում է «պորտալակ» (էջ 103), դա մեր դանդուռն է. «սկորցոցները» (էջ 49) սինձն է, հիացիխտը (էջ 99) հակինթն է, և այլն: Սրանց կողքին բերվում են բազմաթիվ հայերեն անուններ, որոնք մեծ մասամբ անծանոթ են մեր ժողովրդին. օրինակ՝ ընծախոտ, ոսկեծաղիկ, ցոպտղի և այլն: Այդ անունները մեզ ոչինչ չեն ասում և միայն դժվարացնում են գրքի օգտագործումը: Վերջինս հեշտացնելու համար անհրաժեշտ է բոլոր դեպքերում հայերենին կից տալ նաև լատիներեն կամ ռուսերեն անունները, ինչպես արված է որոշ դեպքերում: Այդ անուններով կարելի է բույսերի մասին տեղեկանալ ռուսերեն և այլ լեզուներով գրված ձեռնարկներից:

Թարգմանության լեզուն վատ չե, սակայն կան մի քանի դարձվածքներ, որոնք հայկական չեն: Օրինակ՝ ամբողջ գրքում գործ է ածվում այս ձևը — բույսի մոտ, սա ռուսական ձև է — у растения — թարգմանաբար պետք է լինի բույսի մեջ, բույսի վրա կամ այլ ձևով:

Կան և բազմաթիվ սխալներ, որոնք, ըստ երևույթին, վատ սրբագրությունների հետևանք են: Օրինակ՝ երկսեռի փոխարեն տպված է երկու (էջ 144),

պրոլիֆիկացիայի փոխարեն՝ պրոֆիլակցիոն (էջ 145), պերիկլինալի փոխարեն՝ պերիկլինար (էջ 110) և այլն: Շատ կան սխալներ մանավանդ բույսերի լատիներեն անունների մեջ:

Ընդհանրապես զգացվում է, որ թե՛ թարգմանությունը և թե՛ խմբագրությունը հապճեպ է կատարված:

Տերմինների, անունների, ոճի և այլ գծավորություններ ունեցող մի այնպիսի գրքի թարգմանություն համար, ինչպիսին է «Բույսերի մորֆոլոգիան և էկոլոգիան», պետք է ժամանակ շատ տալ, պետք է տերմինները, անուններն ստուգող և ոճաբանական խնդիրները քննող, օժանդակող մասնագետներ հրավիրել կամ հանձնաժողովներ կազմել, որովհետև այդպիսի գրքի թարգմանությունը սոսկ թարգմանություն չէ և մեկ կամ երկու հոգու ուժերից վեր աշխատանք է:

Այդ գիրքն արդեն սպառված է: Մոտ ժամանակներս կարող է հարց դրվել վերահրատարակման կամ մեկ ուրիշը թարգմանելու և կամ կազմելու մասին: Պետք է բույսերի մորֆոլոգիայի նոր հրատարակությունը տալ «Էկոլոգիայից» անջատ, բնագրի նոր հրատարակությունից թարգմանված և զերծ այն թերություններից, որոնք այնքան իջեցնում են հին հրատարակության արժեքը:

Ա. Արաքաոյան